№ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1894

ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ա Զ Դ

Թուրքա-Հայաստանի քանի մը քաղաքներու մեր կոմիտէներու կողմէն մեզի հաղորդած են, որ խումբ մը մարդիկ կը շրջին Թուրքա-Հայաստանի քաղաքներն ու գիւղերը, կը ձևանան յեղափոխականներ և կը քարոզեն, թէ ցարդ իբր իրանք սխալ ճամբու մէջ էին, առանց երկար բարակ խորհելու և խորհրդածելու նետված էին յեղափոխական ասպարէզի մէջ՝ յուսալով յեղափոխութեամբ բարեփոխել ազգի վիճակը, թեթեւացնել ծանր լուծը, մէկ խօսքով ազատել հայ ազգը սուլթանի կառավարութեան լուծէն, բայց դառն փորձերը ու իրականութիւնը իբր թէ ուսուցին և համոզեցին իրենց, որ իրենք սխալած են, որ յեղափոխութիւնը օգուտ, շահ չբերելէն զատ, կը վնասէ, կը կործանէ հայ ազգը, ուստի ցաւելով և ողբալով իրենց գործած սխալներու, ազգին հասուցած ծանր զրկանքներու, մեծամեծ վնասներու վրայ, վճռեցին առ յաւէտ հրաժարիլ յեղափոխական գործունէութենէ և ամեն ջանք ու ճիգ ընել, դարմանել մատուցած վնասները՝ հաշտվել կառավարութեան հետ, յայտնել իրենց հաւատարմութեան, երախտագիտութեան զգացումները, և կառավարութենէն, և միայն կառավարութենէն սպասել և խնդրել մեր վիճակի բարեփոխութիւնը, կեանքի ապահովութիւնը...

Թիւրքիայի Դաշնակցական Գործադիր-Ժողովն այս շրջաբերականով կը հաղորդէ բոլոր Դաշնակից Կոմիտէներուն, Կուսակցութեանս անդամներուն, քաղաքներու և գիւղերու բոլոր մեր համակրողներուն և ամբողջ հայ ազգին, որ այդ ցած, վատթար, սևահոգի, ազգավաճառ, պնակալէզ դաւաճանները, սինլքոր մարդուկները ոչ այլ ոք են, եթէ ոչ սուլթանի կառավարութեան լրտեսները, մատնիչները, դառն շունները, որոնց բերանը մէկ մէկ ոսկր նետած՝ ուղարկեր է շրջելու և քարոզելու բոլոր հայաբնակ քաղաքներն ու գիւղերը յեղափոխական շարժման առջևն առնելու, յեղափոխութիւնը խեղդելու համար:

Կը յայտարարվի նոյնպէս, որ այդ մատնիչները երբէք յեղափոխական չեն եղած, բնաւ երբէք կապ, յարաբերութիւն չեն ունեցած որևէ յեղափոխական կուսակցութեան հետ, այլ միշտ եղած են կառավարութեան, մեր թշնամիներու բանակի մէջ, անոնց հետ կռված են մեր դէմ, լրտեսած են մեզի, մատնած են մեզի, դաւաճանած են մեզի: Ատոնք, այդ բոլոր թափառական նախկին յեղափոխականներ ձևացողները սուլթանի կառավարութեան հաւատարիմ վարձկան լրտեսներ, մատնիչներ, դաւաճաններ են...

ՍԱՍՈՒՆԻ ԴԷՊՔԵՐԻ ԱՌԹԻՒ

Դեկտեմբեր, 1894

Սասունն ընկաւ...

Այս օր այդ ամբողջ լեռնական գաւառը, առիւծների և արծիւների բնակավայր Սասունը ներկայացնում է աբեան դաշտ. գիւղերը մոխրակոյտեր և աւերակներ են դառած, հասած արտերն անքաղ ոտի տակ են կոխ գնացել, անասունները և կայքերը թալանի բաժին են եղել, իսկ նրա դարերից ի վեր անկախ բնակիչներն այսօր վտարում են սարերում և անտառներում, իբրև փախստական հալածեալներ, սովալլուկ, մերկ, անպաստան, թշուառ: Երէկուայ հպարտ լեռնականն այսօր վիզը ծռած, հաց է մուրում, ողորմութիւն է աղերսում...

Սա ամեն բռնապետութեան սովորական գործ չէ, սա մի միջնադարեան տեսարան է, յատուկ Լէնկթամուրներին, Տուղրիլ բէկերին ու Չինգիզ խաներին: Եւ այդ նոյն պայմանների տակ հեծում է ոչ միայն Սասունը, այլ ամբողջ երկիրը-Վանը, Մուշը, Խնուսը, Բասէնը, Ալաշկերտը և այլն:

Որքան ծանր է ամեն մի Հայի ասել—„Սասունն ընկաւ, սասունցին փշրուած է“...Այո՛, չափազանց ծանր է. մեզ համար ևս անտանելի կերպով ծանր է: Բայց ի՞նչ անել. յուսահատի՞լ, Ատուա՞ծ աղաչել, ողբա՞լ կորուստը...Երբէ՞ք, երբէ՞ք. կրկին դիմել դէպի կոտորած, դէպի արիւն, դէպի զոհ. ահա՛ միակ ճանապարհը, մինչև որ կը կործանուի սուլթանական գահը, կոչնչանայ մարդախոշոշ բռնապետութիւնը:

Ամեն գործ զոհ է պահանջում: Մի ճնշուած, դարերով ստրկացած ժողովրդի ազատ անկախութիւնը շատ մեծ գործ է և նրա պահանջած զոհը պէտք է նրա չափ էլ մեծ լինի: Եւ Սասունը եղաւ այդ մեծ զոհերից առաջինը բուն երկրում: Անհուն, անսահման են եղել մինչև օրս և են այժմ էլ այդ զոհերն ու տանջանքները, բայց դեռ մինչև այժմ մենք չենք ունեցել այդպիսի մեծ զոհ միանգամից: Դեռ քանի քանի այդպիսի զոհեր ենք տալու, կախաղաններ, բանդեր ու տառապանք ենք պատռելու և անցնելու, որ վերջապէս հարթուած տեսնենք մեր ազատութեան ուղին: Կտրուած գլուխնե՛ր, սովամահ եղած դիակնե՛ր, բանտերում փթող կալանաւորնե՛ր, հեղեղներով հոսող արի՛ւն—ահա՛ թէ ինչից է ծնում ազատութիւնը, ահա թէ ինչե՛ր են անկախութեան և բարօրութեան աշխարհ բերողները:

Հարցնենք պատմութեան։ Հին քաղաքակրթութեան օրրան Յունաստանում մի անկիւն, մի քար անգամ չը մնաց, որ ներկւած չլինէր իւր դիւցազն զաւակների արիւնով. մի գիւղ չմնաց, որի փողոցներում տասնեակ ցցեր տնկւած և տանջող դիակներն այլանդակւած չը լինէին վրաները, մինչև նոր վանդալ սուլթանների ձեռքից ազատւիլը։ Բօլղարիան այնքան դիակներ տեսաւ, այնքան արիւն հոսեցրեց, որ մի րոպէ բոլոր ազգերն ասում էին. “վերջացաւ, այլ ևս մի բօլղարացի չկայ աշխարհումս„։ Բայց․․․ նա կրկին ազատւեց։

Մարդկային պատմութեան օրէնքները մէկ են և անդրդւելի ամեն տեղ, ամեն ազգերի համար. մենք և մեր կեանքը ևս շարժւել և շարժւելու ենք նոյն օրէնքների սահմաններում։ Մարդկային կեանքի մէջ շատ և շատ բռնապետութիւններ են կործանւել և նրանց աւերակների միջից ծլել, ծաղկել են նրա ճնշած ժողովրդները յեղափոխութեան միջոցով։ Եւ այսօր ամբողջ հայ երկիրը և հայ ժողովուրդը վխտում է յեղափոխական անձնւէր գործիչներով, որոնք մրջիւնի նման անխոնջ կերպով աշխատում են, որոնք նման են ջրի կաթիլներին, բայց որոնց դիմացի ժայռը շատ փթած, խարխուլ է և ծակելը շատ հեշտ։ Կախում է բռնակալութիւնը Բաղէշում—Մարգարին, Երզնկում—Թիրայրին և այլն—նրանց տեղը ծնւում են նորերը, աւելի ուժեղները և ընդունակները։ Դրանք հարիւրներով, հազարներով են ծնւում։ Եւ կերթան, կուռճանան այդ նոր հոսանքի կարապետները, շունչ, հոգի կը ներշնչեն մեր տանջւած ժողովրդին, կը թարմացնեն, կը բորբոքեն նրա առանց այն էլ բորբոքւած հոգին—մինչև կը փշրւի զզւելի բռնութիւնը, մինչև կը ստեղծւի համերաշխ եղբայրական միութիւն տեղական բոլոր ազգութիւնների մէջ, մինչև կընկնին ազատ զարգացման լայն ճանապարհը․․․

Հեռու չէ ժամանակը, Հա՛յ ժողովուրդ. զանգն արդէն խփել է։ Թուրք պետութեան օրհասն արդէն մօտ է։

Ապստամբութիւն է Մակեդօնիայում. շարժումներն օրաւուր սպառնական և վտանգաւոր կերպարանք են ստանում։ Ապստամբութիւն է Եմենում. Հայաստանի դժոխային պայմանները ծանրացել, խեղդում են և այնտեղ։ Ապստամբական դրութիւն է Փոքր-Ասիայի բոլոր հայաբնակ մասերում։ Միւս կողմից պետութեան պարտքը մինչև բողազն է հասել, հագիւ է շնչում։ Խեղճ ժողովուրդն ամեն տեղ հեծում է աղքատութեան և տարափոխիկ հիւանդութիւնների ձեռին․․․ Այս բոլորը մի տէրութեան հոգեվարքի նշաններն են։

Զարունակի՛ր, Հայ ժողովուրդ, Հայ յեղափոխական. մի-երկու խոշոր ցոյցեր, մի-երկու հաշւած հարւածներ ևս, և գազանը կը գլորւի, և քո ուղին կը հարթւի։

Իսկ զոհերը, իսկ արիւնն ու դիակները չպէտք է քեզ վախեցնեն. դու, ժողովուրդ, երբէք չես յուսահատւելու Սասունի կոտորածով.—դու առաջուց պէտք է գիտենայիր, որ յեղափոխական ասպարէզն արիւն է ուզում, արեան գոլորշիներ, դիակներ, մահ, մահ․․․ մինչև կործանւի բռնութիւնը։

Ուրեմն,—ժողովուրդ, զոհ, կոտորած, արեան գետեր,—ահա ազատութեանդ միակ ճանապարհը։

Մենք այսպէս ենք մտածում, այսպէս է մտածում և ամե՛ն մի ճշմարիտ յեղափոխական, դրա համար էլ մենք ողջունում ենք Սասունցու ահագին զոհը, որ առաջինը եղաւ ազատութեան սեղանի վրայ․․․ Մենք վստահ ենք, մենք համոզւած ենք, որ այդպիսի զոհերով չի մեռնի Սասունը, չի ընկճւի մի ժողովուրդ, որովհետև նրա արմատները շատ խորն են թաղւած մայր երկրի մէջ. ամենափոքր բարեյաջող պայման—և Սասունի առիւծը կրկին կը թռչի իր Անտոքը, իր Գըռ-Գըռ Քարը. հարկաւոր է միայն օգնել, քաջալերել նրան, հարկաւոր է ցոյցեր սկսել և երկրի միւս մասերում։ Չպէտք է վախենալ կոտորածներից, չպէտք է փախչել արիւնից, այլ միշտ դիմել յառաջ, դէպի կոտորած, դէպի կռիւ։ Ձեռք ձեռքի տանք, կռւինք.—ահա մեր գործը։

ՍԱՍՈՒՆ ԿՈՏՈՐԱԾԷՆ ՅԵՏՈՅ

Կռիւը բաւական ժամանակ է արդէն վերջացած է։ Զօրքեր և քիւրտք շտապով յետ են քաշված Սասունէն։ Կառավարութիւն, զոր խիստ նախապաշարեալ կերպով սկսեց մարտական գործը, այժմ հաւաստիացած է, որ Սասուն ոչ ռուսիացի „խառնակիչներ„ (յեղափոխականք), ոչ ալ զէնքերու ահագին ամբարներ կը պարունակէր։ Մուրատ մը կար, զայն ալ իւր ընկերաց հետ ձերբակալեցին և պարզ երևեցաւ, որ Սասնոյ ապստամբութիւնը հետևանք է անլուր կեղեքումներու, բռնաբարութիւններու, թալանի, կողոպուտի և ասոնց նման անարդար ու անխիղճ գործողութիւններու, որոց ենթարկված է մըշտապէս թէ ինք, թէ իւր ընտանիք ու պատիւ, որ այս իրեն կառավարութեան և անոր պաշտօնեաներու ձեռքով ստեղծած պարագաներու անմիջական արդիւնքն էր և ոչ յեղափոխականաց ջանքով միայն եղած։

Այժմ կառավարութիւն իւր կասկածներ փարատած ըլլալով, բոլորովին այլ դիրք է բռներ սասունցոց վերաբերմամբ. ամենայն կերպ կը ջանայ գրաւել զանոնք։ Կը խոստանայ դարձունել թալանած աւարները, 50 հազար ղուրուշ նպաստ բաժանել վնասեալներուն և այլն, միան թէ շնորհակալութեան թուղթ մը տան կառավարութեան, զոր հաճեցաւ իրենց, Սասնոյ մէջ գտնւած „խռովարարք„ պատժել։ Յիշեալ պայմանով կը խոստանայ երկրին հարկերը քանի մը տարի բաշխել ժողովրդեան։ Սասունցիք մերժեր են այս ամօթաբեր առաջարկութիւնը, իսկ Խլաթցիք արդէն տուեր են այն օրինակ բովանդակութեան թուղթ մը. կը կարծվի ուրիշ շատ դաշտային տեղերէ ալ բռնի ստանան այդպիսի թուղթեր։

Դիւրաւ կը հասկցվի, թէ ինչու համար են բռնակալ կառավարութեան այդ օրինակ թուղթեր, ինչպէս կերևի վերջին պատահարներն ի Սասուն խիստ զբաղեցուցած են Եւրոպայի մամուլն, հասարակաց կարծիք և նոյն իսկ վարչական շրջաններ։ Ասոնց պատասխանելու պատրաստութիւններ կը տեսնայ խորամանկ ասիական պետութիւնը։ Անոր պէտք է քանի մը ցոյցերով խափել

օտար պետութիւնները և նա այդ փորձերը կընէ։ Սասնոյ դէպքերէն յետ կառավարութիւնը հալածանք հանած է քրտերու դէմ. ասոնց թալանած աւարնին յետ կը դրաւէ և չնչին գներով կը դարձնէ հայ տէրերուն, որ մինչ այժմ չլսված ու չտեսնված բան էր։ Աս ալ ժողովուրդ մը խաբելու և եւրոպացին կուրացնելու միջոց մէ։ Կը յաջողի…

Կառավարութեան ամեն շարժումներէն կերևայ, որ վերջին պատահարներն ի Սասուն առանձին խստութիւններ ու հալածանքներ յարուցած չէ ժողովրդեան դէմ։ Ամեն բան ըստ առաջնոյն կը շարժվի—մեծ ճամբաներու վրայ կրկին գիւղէ գիւղ կը շրջին նոյն կըռխսարդարներն ու փօլիսները, որք այս ու այն գիւղին մէջ կը լափեն, կը հարբին ու վայր կիյնան, փոխանակ իրենց յանձնված պահապանի պաշտօնը վարելու։ Այս միայն ստոյգ է, որ վերջին ամեն անցքերը հայերուն մէջ խիստ վախ, պանիք են մտցուցեր։

Քիւրդերու և զօրաց յետ քաշվելէն զկնի սասունցիք սկսեր են սակաւ առ սակաւ վերադառնալ իրենց աւերակ դարձած բնակավայրերը։ Սպանվածներու թիւը մինչև օրս ալ յայտնի չէ. կռիւը եղեր է շատ ցրուած ձևով, մասնակցողներու ընդհանուր թիւն ամենևին յայտնի չէ եղեր, իսկ այժմ կենդանի մնացածներու մասին հաստատուն ոչինչ կրնանք լսել. մինչ օրս ալ լեռներէ կիջնան այնպիսինները, որոց մեռած կը կարծէին ամենքը։

Տխուր, վշտալի է դարձողներու վիճակը. տուներն աւերած, ուտելու բրդուճ մը հաց չկայ, զի այս տարի սասունցին հունձէ զրկվեցաւ արիւնահեղ կռիւներուն պատճառով, իսկ կենդանիներն ալ պաշարման կրակոտ պահուն կերակուր դարձան լեռնական կորիւններուն։ Թէ որ այս արտասուալի դառն վիճակը քիչ ատեն ալ երկարի և ոչ. մէկ տեղէ օգնութեան դուռ չբացվի, սասունցիք ալ ստիպեալ պիտի սկսին (բուն երկրին մէջ) մուրացկանութիւն ընել կամ գաղթել „աւետեաց երկիրը„—Ռուսաստան։

Վաղուց է, որ Սասունի կտրիճը սրտատրոփ կսպասէ…օգնութեան։ Անգամ մը ևս կսպասէ սասունցին իրեն անտարբեր, անսիրտ, խորթ եղբայրակիցներու օգնութեան, դէպի որոց այժմ ա՛լ նախկին միամիտ ու վառ հաւատը չէ մնացեր։

Սասուս ձեռքէ գնացած չէ, հա՛յ ժողովուրդ, այլ վիրաւոր մըն է նա, խիստ վէրքերով ծածկված. . վիրաւոր մը—դեղ ու դարման հասուցէք. ձեր ազատութիւնը լեռնոտ տեղերէն է սկսվելու. . .

—.—

ՍԱՍՈՒՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

I

Անցեալ յօդուածովս ցոյց տուի Հայու արդի կացութիւնը, որ հետզհետէ վատթարանալու վրայ է։ Հայու տնտեսական վիճակն այնքան ինկած է, որ անոր կեանքի բնական պէտքերը կենդանույ կեանքէն ալ շատ ստոր աստիճանի մէջ կը գտնվին։ Ոչ կարգին հագուստ, ո՛չ ուտելիք, ո՛չ անկողին, և ոչ ալ բնակարան ունի։ Եթէ մէկը, թէ լինի աշխատանքով, թէ լինի մուրալով, յաջողի կտոր մը կլկէ կամ կորեկէ հաց ճարել, բաղդաւոր է։ Խիստ մեծ մասի հագուստը ցնցոտիներէ կը բաղկանայ, որոյ մէկ թելը եթէ քաշուի, քառասուն կարկտան մէկէն կը թափին։ Ուտելիքն է կամ խոտեղէն, կամ թան ու թանհատ և կամ պատառ մը սև հաց։ Անկողինը կը բաղկանայ կակուղ քարէ բարձէ մը, փափուկ խոտէ կամ անշարժ հողէ մահիճէ մը, մեզարէ (չուլէ) վերմակէ մը. իսկ բնակարանը՝ գետնախորշ ախոռէ, մարագէ և գոմէ մը կը բաղկանայ։

Զմրան նեղութենէն ու անօթութենէն մաշապուրծ պրծնողներն բաւական յուսախաբուեցան, թէ կառավարութիւնը սերմ պիտի տայ ցանելու և արտերն մշակելու։ Այդպիսի զուր յոյսով պահ մը կը մխիթարուէին ապագային կուշտ հաց ուտելու երազով. բայց, բացի վաշխառու շահախնդիրներէն՝ ոչ „հայրախնամ“ կառավարութիւնը և ոչ ալ հայրենասէր մեծատունները աշխատեցան երկրին անկեալ նիւթական վիճակը բարձրացնելու համար օգնել երկրագործին։ Ինչ որ ըրին, աչքակապութիւն էր. այսօր Մշոյ դաշտին մէջ հազիւ հինգ արտէ մէկը միայն ցանած է, իսկ մնացածները կը մնան անմշակ։ Մշոյ դաշտին ցանած արտերուն մի մասը՝ Ցրունայ, Ալիճանի, Քրդագոմի, Օրկնացի, Յունանի և Գոմսի արտերը անցեալ ամրան պէս կիտուը վերստին փչացուց։ Ներքին դաշտի հացը և այս կողմերու թախտաման ելնելէն ի վեր, հացի գինը բաւական էժանցած է, բայց տակաւին շատ հեռու է իւր սովորական գինն իջնալէ։ Այժմ ցորենի կօտը կը ծախվի 15-17 ղր. որ առաջ 25-30 ղր. Կըլկըլ, կորեկ և գարին ալ նոյն համեմատութեամբ էժանցած են, սակայն ի՛նչ օգուտ, երբ աղքատ ժողովրդեան մօտ փարա չկայ, որ կուշտ ուտելու հաց կարողանայ գնել։

Չնայելով այս անտանելի վիճակին՝ միւս կողմանէ ալ կառավարութեան հարկահաւաքիչ պաշտօնեաներն սարսափելի խստութեամբ կը քամեն ժողովրդեան արեան վերջին կաթիլը՝ տուրքերը գանձելու համար։ Կը ծախեն տան միջի ամենաչնչին արժէքաւոր իրերն անգամ։ Ինչպէս Ցրունայ ու Ալվարինճի մէջ, նոյնպէս միւս գեղերու պանդուխտ հայերու կնիկտիք մէկտեղ ժողվելով՝ երեսները մուր կը քսեն, կը ծեծեն, կանպատվեն տուրք գանձելու համար։ Երբ կանայք կաղաչեն, թէ չունինք, պաշտօնեայք լրբաբար կըսեն. „Գացէ՛ք բոզութիւն ըրէք և տուրքը տուէ՛ք“։ Կանանց վրայի լաթերն անգամ հանելով, կը ծախեն տուրքի համար։

—Ալաշկերտի, Մանազկերտի, Պուլանխայ, Խնուսայ և Վարդովայ մէջ գտնված՝ Հասնանցի, Ճիպրանցի, Ջըռըքցի, Պըլըքցի քիւրդ աշիրներն միմեանց դէմ կը կռվին աստիճանի մեծութեան, փառասիրութեան համար, իսկ այս կողմի քիւրդերը՝ Սասունցիք, Բադրանցիք, Խեանցիք, Պիլէկցիք և Պօզըքցիք կը կռվին շահասիրական դիտաւորութեամբ։ Ասոնք թուրք կառավարութեան շլացուցիչ աստիճաններէն խաբվող և համիդիէ գնդվողներէն չեն, այլ իրենց շահուն և օգտին կը նային.

երբեմն հայուն բարեկամ կը ձևնան և երբեմն տաճկին, տեսնելով թէ դէպքերն ինչպէս կը բերեն:

Սասունցի Պշարի Խալիլը, որ որևիցէ գումարի համար հազար անգամներ թէ հայոց և թէ Թրքաց հետ ուխտ ըրած է բարեկամ լինելու, իր մարդիկը կը ղրկէ Պօչքցիներու քարվանի առաջ ,հինգ ջորի իրենց բեռներով խլել կուտայ: Վերջիններն ալ անոր պատկանեալ Հարկուրաց գեղէն 21 ոչխար կը թալնեն:

Յունիս 3-ին Պըտրցի քիւրդերը միմեանց դէմ կը կռվին: Շէկո տունը կը կռվի միւսներու հետ: Առաջինէն մէկ, միւսներէն երկու մարդ սպանված են: Երկուստեք 3 մարդ ալ վիրաւորված են: Հասնանցիք իրարու հետ զարնվելով՝ երկուստէք 12 մարդ կսպանվին:

Թուրք կառավարութիւնը, տեսնելով որ ցեղային ատելութիւն ունեցող աշիրներով կարելի չի լինիր որ և իցէ մեքենայութիւն գլուխ հանել հայոց դէմ, մոլլաներ և շէյխեր կը հանէ անոնց մէջ, զանոնք հաշտեցնելու, որք բաւական յաջողութեամբ գլուխ կը տանին իրենց եղած յանձնարարութիւնը: Զէյլանու Շէյխ Մուհամէտը և Կտորնու Մոլլան բաւական մեծ դեր կը խաղան աշիրներու մէջ:

Յունիս 13-ին Թուրք կառավարութիւնը, մի նոր քաղաքականութեամբ՝ ուղելով մի քանի հայ գիւղեր պատժել, անոնց խաչուրներն ետ դարձուց, ըսելով՝ դուք ապստամբներ է.ք, յեղափոխականներ կը պահէ.ք: Հետևեալ օրը նոյն գեղերու Գազայի Փաստուր գայմագամը 30-35 հեծեալ ոստիկաններով ու ազդեցիկ քիւրդ աղաներով գնաց յիշեալ գիւղերը՝ իր չար դիտաւորութիւնն ի գործ դնելու: Այդ գեղերէն ամենայանդուգն ներկայացաւ Իշխանձոր, որ տեսնելով՝ թէ ինքնակոչ գիւղերը Մարտիկներ (գլխաւորներ) կը ձերբակալեն և աւերումներ կը գործեն, փառաւոր կերպով զէնքի զօրութեամբ վռնդեց յիշեալ քանդիչ պաշտօնեաները և խլեց ձերբակալեալները Յունիս 25-ին: Գայմագամի հետ եկած էին Խէյանցի Հիւսէյին աղան (քեօր Սըլէյի հայրը) և Իւզբաշի Էօմէր աղան և այլ ոստիկաններ ու զուլամներ: Գայմագամի փախչելէն ետք, այլ ևս չեն ուզեր Հիզմէնու, Ընկուզնակայ և Արկունաց տուրքերը, համարելով ըմբոստ գիւղեր, որք դէպքէն իսկոյն և եթ քաշվեցան Քեփին անառիկ սարը, որ ժամանակ մը աւազակ քըրդաց զօլանն էր: Այս դէպքը ահ ու սարսափ ազդեց քրդաց վրայ:

Մայիս 10-ին Թըրպսպի (Սըլէվանի մէջ) գեղի ոչխարները կը թալնեն Ռշգունցի քրդեր, բայց հայեր քաջութեամբ ետ կը խլեն: Ներքին դաշտի հայեր քիւրտ աւազակներու ահէն՝ ոչխարները չեն համարձակիր դուրս պահել գիշերները, այլ տան մէջ կը պահեն:

Մայիս 8-ին Աւազբիւր (Զուխուր) գեղացի Մանուկ անուն անձը արտին մէջ լուծ ըրած ատեն Կոտնվացի քանի մը քրտեր վրան յարձակելով՝ կը սպանեն և երեք եզը կը տանին:

Մաղնիք և Քաջքէնք հայ գիւղերու եզները, ոչխարները, կովերը, բոլոր գոյքերը ու մալերը, բացի ուլերէն թալան կը տանի Սասունցի Պշարի Խալիլը: Յիշեալ գիւղերը Պօղքցի քրտաց կը պատկանին, որք կը պատրաստվին փոխադարձ կերպով յիշեալ Խալիլի հայերը թալնել: Երկու կողմէն ալ հայերը զոհեր են անոնց վրէժխնդրութեան: Առաջ ամեն քիւրտ աղայ իւր հայը վնասող քրտուն կը վնասէր, իսկ հիմակ հակառակն է:

Ցրոնք գիւղի վրայ աւազակաց խումբ մը յարձակելով՝ 30 ոչխար կը տանին:

Գոմերցի հայ մը իւր աղայ սասունցի Իպրահիմի կողմէ օր ցերեկով գեղին մէջ կըսպանվի անոր պահանջքը շուտով չկատարելուն համար:

ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻՑ

Վերջապէս անհերքելի կերպով հաստատեցաւ, ապացուցեցաւ, որ Սասուն և Մուշ կատարած ցարդ չը լսած չտեսնված գազանութիւններն ու անգթութիւնները կատարուերէն ցարդ „Հայրախնամ, ամենագութ և ամենողորմած“ հրչակված արիւնարբու, գազան Սուլթան Համիդի բարձրագոյն իրադէով: Գազան Սուլթանը, առանց նախարարական գիտութեան Զէքի փաշային հրամայած է „ապստամբ հայերուն“ բնաջինջ անել և իրենց արեան մէջ խեղդել, որը Զէքի փաշան Թահսիի օգնութեամբ, ամենայն ճշտութեամբ գործադրած է:

Սուլթանի այդ անգութ, անողորմ գազանային հրամանի զօրութեամբ հազարաւոր հայեր, ծեր, մանուկ, այր թէ կին, պատանի և երիտասարդ, կոյս աղջիկներ, բոլորը սուր քաշածներն, ոչխարի պէս մորթած, կտոր կտոր են արած, հարիւրաւոր կոյս աղջիկներ Զէքի փաշայի հրամանով պղծված, լլկված, յետոյ մորթված, այրված են: 30 գիւղ հիմնայատակ կործանված, այրված մոխիր են դարձրած, բոլոր բնակիչները ջնջված, իսկ հարիւրաւոր գիւղեր թալանված, կողոպտված, աւերած են և բնակիչները ցրված ու փախած:

Անօրէն չար Սուլթանի այս գազանութիւնէն ետքը դեռ պիտի գտնուին դաւաճան հոգևորականներ և աշխարհականներ, որ ասկից ետքը ևս յանդգնին չար Սուլթանի „Հայրախնամ, ամենողորմ, գթառատ“ ածականները տալ և գազան Սուլթանի փշրված գահոյկի առջև դնել հայ ազգի շնորհակալութեան, հաւատարմութեան զգացմունքները:

Չար Սուլթանի այդ գազան հրամանին հակառակութիւն են ցցուցեր մեծ հրամանատար Ղազի Օսման փաշան և առաջին քարտուղար Սիւրէյա փաշան, մանաւանդ վերջինս Սուլթանին սուր դիտողութիւններ ըրած է եղեր տրված հրամանին և հայոց կոտորածի առթիւ, մինչև իսկ համարձակած է Սուլթանին դիտել, որ հայոց կոտորածի հերոսները չվարձադրուին շքանշաններով, բայց անգութ Սուլթանը ոչ միայն չլսեց Սիւրէյա փաշային, այլ և չարաչար պատժեց զինքը՝ հրամայելով թունաւորել փաշան, որ և յաջողեցան: Ղազի-Օսման փաշան վախնալով, որ իրեն ալ չթունաւորուին, Սիւրէյա փաշայի մահէն ետքը հիւանդ ձևանալով չերթար պալատ և ոչ ալ այս երկու շաբաթէ ի վեր կերթայ սէլամլիքին:

Թիւրք կառավարչական բարձր շրջանը հայկական

խնդրոյ առթիւ բաժանված է եղեր երկու կուսակցութեան. մէկ կուսակցութիւնը իրենց պարագլուխ ունենալով Օսման և Սիւրէյա փաշաները, կը պահանջեն եղեր հայկական նահանգներու մէջ բարենորոգումներ մտցնել, իսկ մէկալ կուսակցութիւնը, որու գլուխն է ինքը էաբ Սուլթանը, հակառակ է որ և է բարենորոգման և վճռած է այլ և այլ միջոցներով բոլորովին բնաջինջ անել հայ տարրը։ Բարենորոգմանց կուսակից մասը Սերէյա փաշայի մահով ոչնչացաւ։

Սուլթանի բռնապետութիւնը երբէք չէր յուսար, որ Սասունի և Մուշի կոտորածը կը յայտնի և այսպիսի մեծ, ընդարձակ յուզում առաջ կը բերէ եւրոպական մամուլի, հանրային կարծիքի և կառավարութեանց միջև։ Արիւնարբու սուլթանի քայքայուած, հոգեվարք պետութիւնը այս անակնկալի առջև դողդեցաւ, շփոթեցաւ, իրարանցում տեղի ունեցաւ։ Ելտըզի պալատի մէջ նախարարական ժողովները, խորհրդակցութիւնները միմեանց կը յաջորդէին։ Այդ խորհրդակցութիւններու արդիւնքը եղան այն բազմաթիւ պաշտօնական հերքման գրերն ու զեկուցագրերը, որոնք անձրևի պէս թափուեցան թէ Պոլսի և թէ Եւրոպայի լրագրներու մէջ, որոնք բոլորն ալ որևէ կարևորութենէ զուրկ են և փոխանակ հերքելու, աւելի ևս հաստատեցին կատարուած գազանութիւնները։ Տեսնելով, որ հերքմնագրերը որևէ ազդեցութիւն չունեցան, սկսեցին կաշառել եւրոպական թերթերը, վարձեցին բազմաթիւ թղթակիցներ, փորձեցին կաշառել Պոլսի եւրոպական դեսպաններն, անոնց քաղաքական կցորդներն ու առաջին թարգմանները։ Մի խօսքով, արիւնարբու Սուլթանը, բռնապետութիւնը գիշեր-ցորեկ անքուն կը ջանան խեղդել հայկական խնդիրը։

Թիւրք կառավարութիւնը դադարած „լա Թիւրքի„ թերթի խմբագրին վարձեց և հրամայեց „Օրիան“ անունով նոր ֆրանսերէն թերթ մը հրատարակել և ի նպաստ թիւրք կառավարութեան գրել։ Եւ տակաւին չորս թիւ չհրատարակած, „Օրեանը“ սկսաւ տեղի անտեղի յօդուտ Թիւրքիայի նպաստաւոր յօդուածներով լեցնել իր թերթը։ Թիւրք թերթերն ալ այդ յօդուածները արտատպեցին իբրև Եւրոպական թերթի ինքնուրոյն, անկախ կարծիք։ „Միամիտներ“, կը կարծեն թէ Եւրոպան, հայութիւնը կոյր են, չեն տեսներ, չեն հասկնար, որ „Օրիան“ Թիւրք կառավարութեան օրգանն է և իւրաքանչիւր տող անոր ներշնչմամբ գրուած է։ Ասկից զատ հասկցուց Դիմաքսեանին, որ եթէ ուղերձով դիմում մը ըլլայ կառավարութեան, կառավարութիւնը տրամադիր է ի սէր հայոց ազգի 300-ի չափ բանտարկեալները ազատել, բայց հակառակ կառավարութեան և Դիմաքսեանի կամաց՝ այդ դիմումն ալ մերժեցաւ։

Կառավար. հայերու հաճոյանալու համար 750 ոսկի նուիրեց նպաստամատոյց յանձնաժողովի կողմէն հայոց եկեղեցական և հանրային շէնքերը նորոգելու համար, որ երկրաշարժէն վնասուած էին։ Այս 750 ոսկի նուէրի մասին միայն հրատարակեցաւ և 10 օր անցաւ այդ լուրի հրատարակութիւնէն, բայց դեռ տակաւին սակը չստացուեցաւ։

Թիւրք կառավարութիւնը 500 ոսկիով կաշառեց հայ կաթոլիկներու Սզարեան պատրիարքը։ Ազարեանի կառավարութեան մատուցած հաւատարմութեան և երախտագիտութեան ուղերձը, հայ կաթոլիկ առաջնորդներուն և հայ կաթոլիկ հօտին Ազարեանի կողմէն ուղղած շրջաբերականները 500 ոսկիի արդիւնք է։ Ազարեանի այս անարդ, դաւաճան ընթացքը, իր ուղերձն ու շրջաբերականը ոչ միայն զզուանք և յուզում առաջ բերին մեր հայ կաթոլիկ եղբայրներու զարգացած մասին մէջ, այլ և խոնարհ խաւերու մէջ ևս տրտունջներ ու դժգոհութիւններ առաջ բերին։

Թիւրք կառավարութիւնը ամենաստոր միջոցների դիմելով կաշխատէ մեզի խաբել. թող լաւ գիտնայ, որ հայ ազգը այլ ևս առաջուան թոյլ, տկար, անխելք, լացող և միամիտ չէ, և այսուհետև հայ ազգը այլ ևս չի խաբուի։ Նախկին լացող մանուկը այժմ չափահաս մարդ, երիտասարդ մէ և իր պահանջները լալով, պոռալով չուզեր, այլ զէնքով, արիւնով ու մահով։

Սասունցիներու, քաջա անջ, արի Սասունցիներու արիւնը վրէժ, վրէ՛ժ կը պոռայ։

Սասունցիի պղծուած, անպատուած և ապա մորթուած ու այրուած հայ կոյսերու, հայ կանանց անմեղ արիւնը վրէ՛ժ, վրէ՛ժ կը կանչէ։

Հայ անմեղ գառնուկներու ու անբիծ մանուկներու անմեղ արիւնը վրէ՛ժ, վրէ՛ժ կը ձայնէ։

Հայեր, հայ երիտասարդներ, մահ կամ ազատ կեանք կը գոչենք մենք ալ, միացնելով մեր ձայնը ազատութեան համար սուրը ձեռքին մարտնչող և նահատակի պսակը ընդունող մեր նահատակներու հետ։

Հայեր, երդուենք Սասունցի նահատակներու անունով նրանց սուրբ շիրմով, մեր սուրը վար չդնել, մեր կռիւը շարունակել մինչև մեր վերջին շունչ—մեռնել ազատութեան համար, ապրել ազատութեան համար։

***

Սուլթանի կառավարութիւնը, որ 4 տարիէ ի վեր չէր ճանչնար „Հայոց Ազգային Ժողով“, Սուլթանը, որ „Սահմանադրութիւն“, Երեսփոխանական Ժողով անուններ լսած ատեն կը դիւահարիր, արդի պարագաներու առջև ժամանակաւորապէս տեղի տուաւ, թոյլ տալով „ժողով“ գումարել. արգելեալ Ազգային Ժողով անունը նորէն թոյլ տուաւ. թոյլ տուաւ նոյնպէս, որ հայերը իրենց ցանկացած անձերը պատրիարք, Քաղաքական ու Կրօնական Ժողովներու անդամ ընտրեն, մինչև իսկ գործակատարներու ջանքով աշխատեց, որ կառավարութենէն ցարդ հալածուած. ազգի սիրելի անձերը պաշտօնի կանչուին, մինչև իսկ հրատարակել տուաւ „Օրիան“ թերթի մէջ, թէ կառավարութիւնը չուզեր, հետևելով եւրոպական պետութիւններու՝ միջամտիլ, ճնշում գործել, ազդեցութիւն բանեցնել հայոց եկեղեցական ընտրութիւններու մէջ և տեսնելով, որ հայոց շահերը կը վնասուին առանց պատրիարքի, թոյլ տուաւ, որ փութով ընտրեն իրենց պատրիարքը և վարչական ժողովները։

Ամսոյս 7-ին, չորեքշաբթի օր գումարուեց Ազգային ժողով և Թուրքիոյ հայոց պատրիարք ընտրեց Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանը 67 քուէով, քուէարկուներ

79 էին։ Ազգային ժողովոյ նիստը դռնփակ էր։ Ոստիկանութեան նախարարի օգնական ճիւանի պէսը բազմաթիւ զօրքով, փոլիսներով և անթիւ լրտեսներով շրջապատած էր Մայր եկեղեցին, ուր նիստը տեղի կունենար։ Կառավարութիւնը ամեն միջոց ձեռք առած էր, ամեն ինչ նախատեսած էր, որ ամենափոքրիկ խլրտում, ցոյց տեղի չունենայ։

ՆԱՄԱԿ ԽՆՈՒՍԻՑ

Երեք տարիէ հետէ տիրող սովը, տէրութեան հարստահարութիւնները և քրդերու կեղեքումները ժողովուրդը այն աստիճան նիւթական խեղճ և անկեալ կացութեան մէջ են թողեր, որ երբեմնեան բազմահարուստ տան անդամները, որոնց հիւրասէր սեղանի շուրջ օրէնը հարիւրաւոր անցորդներ կը կերակրուէին, այսօր մերկ դուռէ դուռ կը շրջին ի խնդիր կտոր մի հացի. գիւղեր, որ մի քանի տարի առաջ երջանիկ և բարեբաստիկ կեանք կանցնէին, ուր հարիւրէ աւելի ցանք անող տներ կար, այսօր միայն 15-20 ցանող հաղիւ մնացած է. միւսները մասամբ գաղթած, մասամբ յետին թշուառութեան մէջ կը հեծեն, այնպէս որ մի երկու տարիներ ևս եթէ այսպէս տևէ, ակներև է, որ ճամբորդ օտարականը աւերակաց մնացորդներէ միայն պիտի գուշակէ, թէ ժամանակին այստեղ՝ կապրին եղեր և հայեր. թող ժողովրդի նիւթական վիճակը։ Խնուսի հայը կը հեծէ այսօր Օսմանեան բիրտ կառավարութեան անողոք լծի տակ, կորուսած լինելով նամանաւանդ մի քանի տարիներէ հետէ իբրև մարդ պետական դռան առաջ ամեն իրաւունք և զրկված իսկ ինքնապաշտպանութենէ։ Հարկահանները սոսկալի յիշոցներով, ապտակներով և արիւնով կը ներկեն թշուառներու մարմինը, գանակոծելով նոյն իսկ կանայք և աղջկունք։ Խեղճերու միակ յոյսն, ապաւէնն ալ աճուրդի կուտան (հասկանալի է ինչ գնով) ծախելով իսկ անկողինները, կանանց զարդն, իսկ անկարողներուն մատնելով բանտային ծանր տանջանքներու, որոց ոյժի և մահաբոյր օդի մէջ վաղ թէ անագան պիտի ինքէ իւր մահկանացուն, անօթի, ծարաւ, հեռու իւր սիրելեաց բազուկներէն, զուրկ վերջին քաղցր մխիթարութիւնէն. և երջանիկ է, եթէ բարեսիրտ մին համարձակի մէկ քանի կանգուն կտաւով պատանելով՝ յանձնել մայր-երկրին ծոց։ Լեռան աւազակն և հարկահանը անպատիժ աւերում են նորա արտերը, թալանում նրա. գոյքը, կողոպտում տունն, հարստութիւնը և այլն, յաճախ իսկ առևանգում նորա հարսը կամ կոյս աղջկան, որ ստիպված է միայն ձեռք ի կուրծք տխուր, լալագին հեծել և արտասվել... Յուզ ի ձեռին դիմում է կառավարութեան դուռ, իւր ունեցածը լեցնում է յիմարաբար թուրք պաշտօնեայի անկուշտ որկորը, գանգատվում է, բողոքում է, աղերսում է, հեռագիր է տալիս կուսակալութեան, նոյն իսկ „ամենաողորմած„ կայսեր, սակայն այս ամենը կը մնայ ձայն բարբառոյ յանապատի. յուսահատ կը վերադառնայ, կը թողնէ հայրենի գոյքն ու կալուածները և բռնելով իւր կնոջ ու մատաղերամ զաւակաց ձեռները՝ կը դիմէ դէպի պանդխտութիւն։ Դիւրին է երևակայել, թէ ինչպիսի դաժանութիւնք և անտանելի ցաւեր տանելով, նա կարող է, եթէ յաջողի անցնել սարեր ու ձորեր, հասնի ապաստանարան մի, ուր կարկառելով իւր ձեռքը՝ անգործ օտարութեան մէջ կարենայ կտոր մի հաց ստանալ սովէն չմեռնելու համար։ Եւ այն էլ գնացողներէ քանի՞ն կը հասնին իրենց ցանկալի վայրը։

Ուղևոր մը կը պատմէր, թէ ռուսական սահմանի վրայ այս գարնան կը հանդիպի ծերունազարդ ալևորի մը, որ ընկած հողակոյտի մը վրայ՝ կարտասուէր լալահեղձ։ Օտարականը կը մօտենայ ծերունուն, կը խօսի, կաշխատի մխիթարել և իմանալ, թէ ո՞վ է, ի՞նչու կարտասուէ այդպէս դառնահեղձ։ Ծերունին կը սկսէ խօսիլ. „թո՛ղ, աղա, թո՛ղ, որ ես. իմ ցաւերովս այրվիմ, խորովիմ. թող Աստուծոյ տուած պատիժները քաշեմ լուռ և անբարբառ. թերևս ժամանակին մէկին իրաւունքը յափշտակած էի կամ թշուառ օտարական մը բրտութեամբ մերժած, որ Աստուած այս սև օրուան հասուց զիս. այսպէս անմխիթար կեանքիս վերջ պիտի տամ։ Ես խնուսցի եմ, Իլդիս գիւղացի, ահագին հարստութեան ու կալուածներու, փառաւոր տան, մեծ հօտերու և անթիւ տաւարներու տէր. երանի թէ բնաւ չունենայի, որովհետև այս օր այս խեղճ վիճակին զիս հասցնողը իմ հարստութիւնն էր։ Աղա, այստեղ, Ցաճկա-Հայաստանում հայու յանցանքը միայն կուշտ փորով հաց ուտելն է. յիմարաբար կուտանք մեր ունեցածը օտարին, կը հիւրասիրենք մեր տան մէջ, որ աչք դնէ մեր մալին, ձեռք երկնցնէ մեր պատուոյն։ Մէկ տարուայ մէջ տարան բոլոր ոչխարներս թուով 360, գոմէշներս, այրեցին խոտի բարդերը, ցորենի արտերը, վառեցին գոմս բոլոր կենդանիներով մէկ տեղ, այնպէս որ աշնան էլ ոչինչ չունէի։ Դիմեցի Բերդ բաղէշցի հարուստ վաշխառուի մը, թող Աստուած ինքն անոր հետ արդար դատաստան տեսնէ, յանձնեց ինձ 20 ոսկի վեց ամսէն տալու պայմանաւ և 30 ոսկի ստորագրութիւն առաւ. ի՞նչ անէի, անճար էի մնացեր, որո՞ւ պարզէի ձեռքս։ Կէս ճմրան, նորէն ամեն բան վերջացաւ։ Որոշեցի թողել տուն տեղ, պապերու արիւն քրտինքով վաստակած՝ պարտքի փոխարէն և գնալ օտար երկիր։ Գիտէի, թէ ինչ նեղութիւններ պիտի քաշէի, բայց լաւագոյն կը համարէի մեռնել, արջերու, գազաններու հետ լինել, քան թէ իմ երկրի մէջ ձեռք պարզել, վիզ ծռել անբախտ գրացուն։ Հասանք Աղվերանի կիրճը. սոսկալի էր ձիւնն ու բուքը. գայլերու վոհմակ մի յարձակեցաւ մեր վրայ։ Կտրիճ տղայ մի փայտ ձեռին դիմեց նորա վրայ մեր պաշտպանութեան համար։ Աղա, Աստուած իմ, այս տըխուր աչքերս տեսան, թէ ինչպէս նա պատառ պատառ կեր եղաւ էն սարի գազաններուն. մեր լացը և հեկեկանքը կը թնդացնէր արարած աշխարհ. պստիկ տղայք կը փաթաթին իրենց մօր վզին և սրտակոտոր ձայներով կու լային. Աստուած իմ թշնամուս թող ցոյց չտայ։ Երբ անմեղ թռունիկներս էլ հարսիս գրկէն յափշտակելով՝ թողին և փախան, մենք մնացինք չորս հոգի և ըսկսանք ինքնել լեռնէն ցած։ Վերջին թռունիկս ցուրտէն

մեռաւ։ Հասանք քիւրդ Քոռջուր գիւղը. ոչ ոք ընդունեց մեզ. կինս էլ այնտեղ կնքեց իւր մահկանացուն և ես դեռ յոյս ունէի, որ Հարսիս հետ պիտի ազատիմ։ Սոսկալի նեղութեամբ անցանք Բասէն, կշտապէինք հասնել Ռուսէթ, գոնէ այնտեղ օտարական ցաւակից մը մեզ կտոր մի հաց պարգևէ, երբ այս գիշեր«...Էլ չկարողացաւ խօսել և ձեռքով ցոյց տալով հողակոյտը՝ „ահա Հարսիս գերեզմանը, ուր իջաւ կաթուածահարից„։ Իզուր կարեկից անծանօթը կաշխատէր նորան համոզել, որ հետևի իրեն մօտակայ գիւղը։ „Էլ այսուհետև ինչ պէտքէ ինձ տեսնել արևի լոյսը, վայելել աշխատութիւնը. հերիք չէ՞ կրած նեղութիւններս. այստեղ պիտի մեռնիմ, Հարսիս հետ թաղվիմ. Աստուած իմ, էլ հերիք է, առ Հոգիս„ և նստաղած ընկաւ հողակոյտի վրայ... Յաջորդ օր այնտեղ գտան ծերունու մը անկենդան մարմինը ինկած իւր Հարսի գերեզմանի վրայ։

Տխուր օրինակ մ՚ալ, որով կրնաք գաղափար կազմել 360 տուն գաղթականներու մասին (թւով մօտ 4000 Հոգի) որ այս տարի յաւէտ բաժանվեցան. Խնուսի անուշ Հողէն ու ջրէն. բաւական չէ բնութեան և Աստուծոյ տուած պատիժներ, անխիղճ թուրքերը ու քրդերը չեն թողուր, որ այդ թշուառ ժողովուրդը գոնէ մեռնի իւր պապական երկրին մէջ, իւր սիրելեաց քով։ Կտրիճ տղայք տարագրած օտար աշխարհ՝ անասնական պաշտօն կատարելով և մեռցնելով իրենց ծաղիկ կեանքը, կաշխատին իրենց տներուն պատառ մի հաց Հասցնել, սակայն օտարին է իրենց վաստակը և մշտական չքաւորութիւնն բաժին է Հայուն։ Իբրև ապստամբ նկատելով՝ գաղտնի ոստիկաններ այս ձմեռ տեղս գալով, 13 անմեղ անձինք ձերբակալեցին և Կարին տարան, որոնց շատերը ազատելու յուսով տուին պաշտօնէից իրենց ունեցածը, չունեցողներն ալ տուին՝ պարտքի տակ ընկնելով. սակայն չօգնեցին այդ ամենը և ցայսօր անՀաց, անՀարց, անդատաստան կը Հեծեն բանտերու մութ յարկերու տակ և այն էլ ինչ թշուառ կեանքով. լաւագոյն էր մեռնէին։ Ամռան 67 անձանց նոր կոչնագիր եկան դատաստանին ներկայ գտնուելու Համար, իբր թէ ներքին քաղաքականութիւնը կը խռովեն. բայց նոցանից և ոչ մին յանձն չառաւ գնալ, միայն մի երկու Հարիւր ոսկի վատնեցին միայն երեք օր ազատ մնալու Համար։ Քիւրտը, թուրքը մեզ կասպատակեն, կը կողոպտեն և կանպատուեն, կը Հայհոյեն ապստամբ նկատելով Հայ ազգը։

Անմիտնե՞ր, փոխանակ այսքան ստակ իզուր մսխելու ու այսքան Հարստութիւն այդպէս անդարձ ու աննպատակ կորցնելու, յուսալով ձեր կեանքն ապահով վիճակի մէջ պահել, լաւագոյն էՀ՞ր լսէիք փորձառու անձնաւորութեանց խօսքերուն, օր առաջ զէնքի պատրաստութիւն տեսնէիք և այսօր, երբ պարզ կտեսնիք, թէ այլևս անկարելի է Տաճկահայաստանում այլ կերպ ապրել, որ միայն ձեր զէնքը ձեզ պաշտպան պէտքէ լինի, զէ՞նք, զէ՞նք, կաղաղակէք այսօր.... Հայի յետին խելքը սիրեմ....։ Դեռ ժողովրդեան ջղերը յոյս ունին, թէ կարող են կառավարութեան հետ հաշտ ապրիլ և դեռ կը վատնեն իրենց ունեցածն իզուր։ Իսկ ազգային գործի Համար, իրենց անձնապաշտպանութեան Համար յանձն չեն առներ ստակ մը զոՀել. բայց և այնպէս մխիթարական է տեսնել, որ շատ տեղեր նամանաւանդ նորահաս երիտասարդներ Հոգով կը ցանկան չխաբվիլ, կռվիլ և դէմ դնել թշնամուն և շատ տեղեր գովելի նախանձախնդրութեամբ խումբեր կազմած են պաշտպանել անկեալ ժողովրդեան շահերը. քիւրտերու սպանութեանց նոյն կերպ պատասխանելով, վատ հնային բացարձակ սպառնալով և յայտնի մատնիչներ կորսունցնելով։

Անկարելի է նկարագրել, թէ որ գիւղ ինչքան Հարստահարութիւնք և սպանութիւնք եղած են. ատոր Համար ստուար Հատորներն իսկ անբաւական են։ Այն աստիճանի Հասած է, որ գիշեր թէ ցորեկ խումբ-խումբ յարձակելով, ակնյայտնի և բացարձակ կը տանին ոչխարներ և աչքի ընկած ապրանքը։ Կայ տուն, որ երբեմն 700 կթանի տէր էր, իսկ այսօր ամբողջ գիւղեր միայն հինգ կթան Հաղիւ ունենան։ Կէս օրին խումբ-խումբ հեծեալներ զինուած կը քաղեն Հասկերը, ձիերուն կը բառնան և կը տանին. վայ այն խեղճ աշխատաւորին, որ ճիչ մը արձակէ... Գալով գիւղերու մէջ, կարձակեն լծած եզները, կը քանդեն ամբարները և դիզուած ցորենները, ներէն բռնի կը յափշտակեն, ինչ բանի որ Հանդիպին։ Եւ այս ամենի Համար ոչ բողոք կայ, ոչ բողոքողներու ձայները լսող։ Ճիշտն ըսած, տէրութիւնը այլ ևս անկարող է քուրտերուն զսպել. իսկապէս չուզեր, որ անարգել կը գործեն իրեն ցանկացածին Հակառակ։

Մօստկօ անուն քուրտ մը իր 3-4 ծառաներով գարնանը ի բաց կաւերէ երկիրը, յարձակելով շարունակ, բացի գիւղերէն՝ և փօստի, և կառավարական պաշտօնէից, և զօրաց վրայ, սպանելով շատերուն, թալանելով ամբողջ կարաւաններ. և թէև Պօլսէն անոր սպանութեան Հրամանը եկած էր, բայց ցարդ կառավարութիւնն անկարող եղաւ ձերբակալել. միայն անոր ազգական քուրտերը խաբէութեամբ ձերբակալելով՝ ամսիս 18-ին յանձնեցին կառավարութեան։ Հարկ չկայ ըսել, թէ ահագին ցնծութիւն և Հրախաղութիւնք տեղի ունեցան, իբր թէ ահագին թշնամու յաղթած լինէին։

Մէկ դէպք նկարագրեմ, որով հնար է պարզ գաղափար մը կազմել Հայ գիւղացու քաշած տանջանքին։ Օգոստոս 20-ին Սասնոյ ապստամբութիւնը զսպելու գընացող Համիտիէ հեծելագունդ Հայտարանցի աշիրէթը Հիւսէյին փաշայի առաջնորդութեամբ 400 հեծեալներով աստ ժամանեց և գիշերեց Արոս գիւղն։ Բոլոր բոստանները քանդեցին անխնայ. Հարկ չկայ ըսել, թէ վճարում չկայ ամենևին, և սկսան ձիերով զօրախաղութեամբ պարապել և Հրացան արձակել. երեկոյեան գիւղի նախիրը գալուն պէս, մորթեցին 6 եզ, 4 երինջ, 30 ոչխար, 10 այծ, մասամբ խորտիկ պատրաստեցին և մնացածն ալ Հետերնին տարին։ Ընտրեցին գիւղացոց ամենաընտիր նժոյգները, մտան տունները, յափշտակեցին իւղ, պանիր և ձմրան ամբողջ պաշարեղէն, իսկ մնացած իւղի տիկեր պատռելով և փեթակներ ջարդելով և սեփականացնելով այն ամենը, ինչ որ իրենց աչքին կընկնէր։ Երբ գիւղի ուէս և մեծեր գնացին բողոքելու քուրտ

փաշային, վերջինս պատասխանեց հայհոյանքով, թէ ապստամբ հայերու հետ այդպէս վարուելու հրամայուած է մեզ։ Գիւղապետը պատասխանեց փաշային. „դէթ բոլորովին մի աւրէք, որ վերադարձին ձեզ ուտելու բան ունենաք“։ —Կորէ՛ք, գեաւուրներ, փրփրաց գազան փաշան, գիտէ՛ք, որ ձեր վախճանը հասած է. վաղ թէ անագան թողէք զայս երկիր. լաւ է օր առաջ վերջացնել ամէն բան, աւերել տունները, սպանել բոլորիդ, թրատել մանուկներուդ, խլել ձեր կիները և տեսնինք, թէ դուք, հայերդ գեաւուրներու օգնութեամբ ազատութիւն գրտնելով՝ ինչու վրայ պիտի թագաւորէք։ Կէս դիշերուան երբ հարբած զօրքերը կՀրճէին խորտիկներով. բոլորին ներկայութեամբ փաշան կանչելով գիւղապետին՝ սպառնական ձևով կխօսի. „ապստամբ, դիտես, որ մենք ձեզ համար ենք թողել տուն ու տեղ, կորուցել մեր հանգիստը, մեր գիշերուան քունը. դէհ, գնա, շտապիր հենց այս ըոպէիս գիւղի մէջ գտնուած մատաղ հարսներից ջոկելով, յանձնիր մեր բանակին, որպէս զի մոռանանք ձեզ համար քաշած նեղութիւններս և ամենէն գեղեցիկ աղջիկ ինձ բերես, ապա թէ ոչ, յանուն Աստուծոյ և մեծ մարգարէի ամէնքիդ բնաջինջ կանենք։ Այսպէս է հրամայուած մեզ“։ Գիւղապետը հաւանութեան նշաններ ցոյց տալով, դուրս կերթայ և արտասուահեղձ աչքերով կը կանչէ գիւղացիներուն և կպատմէ ամէն բան։ Ճարահատ ամէնքը կընթանան ի զէն. իսկ որն որ անզէն էր, գերանդիներով և բահերով, քարերով և սուրերով զինուած, ուղղակի յարձակում կանեն քիւրդ բէկի վրայ, սպառնալով որ իսկոյն և եթ գիւղից դուրս գայ, ապա թէ ոչ ամէնքը կը թրատին։ Փաշան տեսնելով, որ այդ շատ վտանգաւոր հետևանք կրնայ ունենալ, կՀրամայէ, զօրքերուն ժողովել ամէն ինչ, կողոպտելով իւրաքանչիւրը իւր հիւրընկալներու տունը և սպառնական երդումներով ապստամբներուն դէմ, կը չուին դէպի Սասուն։

ՊԻԹԼԻՍԻ ԹԱՀՍԻ ՓԱՇԱՆ

Պիթլիսի արդի վալի Թահսի փաշան Պօլիս հանրածանօթ է իր կաշառակերութիւններով, անլուր կեղեքումներով և հարստահարութիւններով։ Ասոր դէմ տըրտունջներն ու գանգատներն այնչափ մեծցան և շատցան, որ Բ. Դռան իր պաշտպաններն այլ ևս անկարող են իրենց պաշտպանութիւնը շարունակել։ Թահսի փաշայի դէմ եղած բազմաթիւ գանգատներուն վերջ տալու համար, իր բարեկամներն ու պաշտպաններն, որոնք անոր կաշառակերութիւններուն, կեղեքումներուն մասնակից և ընկեր էին, բարւոք դատեցին Թահսին հեռացնել Պօլսէն և յաջողեցան Թահսի՝ աւազակը Պիթլիսի վալի նշանակել տալ։ Այս կարգադրութեամբ թէ անպատիժ մնաց Թահսի աւազակը և թէ պնպիսի կուսակալութեան մը վալի նշանակուեցաւ, ուր սանձարձակ և անպատիժ իր աւազակութիւններն, կեղեքումները և հարստահարութիւնները կրնար շարունակել և իրենց ընկած մասն ու բաժինն ալ իրենց ուղարկել։

Այն օրը՝նէ, որ Թահսի փաշան ոտ կոխեց Պիթլիս, երկրի կատարեալ պատուհասը եղաւ։ Իր աչքը տնկեց Պիթլիսի հայ հարստներու վրայ և սկսաւ անոնց յայտնի և անյայտ կերպով կթել. հայկական խնդիրը պատրուակելով, բանտի, աքսորի երկիւղի տակ սկսաւ հայ հարուստներէն անլուր կաշառքներ առնել. դիմադրութիւն ցուցնողին մինչև իսկ կախաղանով կը սպառնար։ Հայ հարուստները վալիի դուռը հարուստ կերթային և աղքատ կը դառնային։ Պիթլիս քաղաքի հարուստները լաւ մը կողոպտելէն՝ կեղեքելեն ետքը, աչքը դարձուց գաւառի վրայ։ Թահսի փաշան գաւառական պտոյտի պատրուակով ամիսէ մ՚ի վեր կը պտտի գաւառները և անլուր կերպով կը կեղեքէ հարուստ գիւղացի հայեր, ձերբակալութիւններ, բանտարկութիւններ կընէր և մի և նոյն ժամանակ կը հասկցնէր, որ եթէ ստակ տան՝ կազատուին։ Ստակ ունեցողները կուտային, կազատուէին, չունեցողները իրենց ունեցածը, շատ անգամ միակ եղն ու գոմէշը կը ծախէին, տուներնին, արտերնին գրաւ կը դնէին, ստակ կառնէին, կուտային աւազակ Թահսի փաշային և կազատէին։ Թահսի աւազակը այսպիսով 8500 ոսկիէն աւելի ստակ կորզեց, յափշտակեց Պիթլիս քաղաքի և գաւառի հայերէն։ Քանի մը հայեր հոս եկան, իրաց վիճակը յայտնեցին ներքին գործոց նախարարին և եպարքոսին։ Թէ ներքին գործոց նախարարը և թէ մեծ եպարքոսը աս բողոքարկուներուն յայտարարած են, թէ ձեր բողոքները գրաւոր յայտնեցէք։

Բողոքարկուները գրաւոր կը վախնան գանգատիլ, որ չըլլայ թէ իրենց բողոքները անհետևանք մնան, Թահսին անպատիժ մնայ և իմանալով այդ իրենց չարաչար պատժէ, տունով տեղով բանտերու մէջ փտեցունէ։ Բողոքարկուները Թուրքական արդարադատութիւնէն և պաշտպանութիւնէն որ և է յոյս չունենալով, և աւելի չարագոյնէն վախնալով՝ իրենց դատը Աստուծոյ դատաստանին յանձնելով գոհացան և Թահսի աւազակը 8500 ոսկին կառավարութեան գիտութեամբ, յայտնի կերպով գրպանեց և մարսեցաւ, առանց պատժուելու։

ՆՄՊԱԿ ԵՕԶՂԱՏԻՑ

Յեօզղատ ցարդ պատահած զրկում և լլկում, զրպարտութիւն և բանտարկութիւն, տանջանք, մահ և նման սմին դէպքերը այնչափ յաճախ են և այնչափ գրված, որ այլ ևս գրիչներն անգամ յոգնած են։ Այնուամենայնիւ չենք կրնար լռել և չզբաղվել թիւրք կառավարութեան բռնութեանց և բարբարոսութեանց դէմ։

Ահա քանի մը դէպքեր ևս։

Քաղաքս գրեթէ 250 հայ բանտարկեալ կար, որոց վիճակը նկարագրված էր։ Անգղեոյ միջամտութեան շնորհիւ կառավ. 215-ը արձակեց, 35-ը պահեց, որոց եօթը, այսինքն՝ Համբարձում էֆ. և Յակոբեան աղա Փափազեանք, Յարութիւն էֆ. Թէքիրեան, Դոկտոր Տիգրան Սիւնի, Սերովբէ էֆ. Էմինեան, Նազար էֆ. Պէրպէրեան Թապաղ Մարկոս՝ եօզղատցի են, մնացեալք այլ և այլ գիւղ և քաղաքից։ 35 մնացեալ բանտարկելոց 14-ը

Գաղատիա բանտարկեալ էին և իրենց դատն ևս առլեյէն կատարվելու վրայ էր և անպարտ արձակվելնուն մեծ յոյս կար. յիշեալ 14 բանտարկեալք, որ առաջ Եօզղատէն ղրկված էին, վերստին հոն ղրկվեցան „դիվանը-Հարպին„: Սակայն „դիվանը-Հարպը„ առանց ոևէ քննութիւն կատարելու նոցա մասին, փոխադրվեցաւ Գաղատիա, անտից ալ Եւդոկիա. 2 ամսէ վերստին պիտի վերադառնայ Գաղատիա, որ այժմ կենտրոննէ „դիվանը հարպին„. Մնացեալ 21-ը մահուան դատապարտված են:

Ահա եօթ եօզղատցիներուն ամբաստանութիւնք.— Համբարձում էֆ.՝ 2 տարի առաջ Հայոց զէնք բաժանած և խրախուսած է. Յարութիւն էֆ.՝ բուն յանցանքը Եօզղատի լաւիհէն և իւր հարցաքննութեամբը կառավարութեան անօրինութեանց դէմ բողոքելն է, ասկէ զատ Յակոբեան աղային հետ զէնք ի ձեռին դէպքին օրը եկեղեցւոյ դրան առջին երևցած են. Նազար էֆ.՝ խանութնին գոցվելուն հրամայած է. Մնացեալ երեքն՝ իբրև մարդասպան. այս ամենն ալ զրպարտութիւն են, վկաները սուտ, վկայութիւնք անհամաձայն և նոցա ունկնդրութիւնք բոլորովին արտասովոր: Անգղ. թերթերէ կը լսենք, թէ մնացելոց դատաքննութիւնք վերստին պիտի կատարվին. արդարև նոցա էվրագը Պօլիս ղրկվեցաւ, սակայն Թուրքը չկրնար ըստ օրինի քննութիւն կատարել. ինքն գիտէ նոցա անպարտութիւնը, միայն թէ Եւրոպան կը խաբէ սուտ ու փուտ խօսք ու խոստումներով:

Տեղոյն կառավարութիւնը գիտէ բանտին մէջ Թուրք բանտարկելոց ձեռքով Հայ բանտարկեալք մեռցնել տալ, զոր արդէն փորձով յաջողած է: Այս անգամ ալ մըտադիր է մեռցնել տալ Գասպար և Վարդօ անուն Հայ երիտասարդները և համոզած է Թուրքերը: Բանտին մէջ մօտերս տեղի ունեցաւ ահագին կռիւ մը. Թուրքերուն նպատակը, որ այդ երկու Հայերը սպանելն էր, չյաջողեցաւ. միայն չորս Հայու գլուխ ճեղքելով՝ վերջ տուին, ուրիշ յարմար ժամանակ յաջողելու յուսով: Սէր-Ղարտիյանը Հայերը շղթայակապեց կռվէն վերջ, իբր կռւոյ շարժառիթ, մինչդեռ նպատակը կռւէն ազատածները երկրորդ անգամ կոտորելն է: Արթաքի Այվազեան իւր կատաղութեան զոհ գնաց: Մի քանի Հայերուն շղթան թէւպետ և կաշառքով հանած է, սակայն յիշեալ երիտասարդներուն շղթան թէ խիստ ծանր ըլնելու և թէ չհանելու համար երդում ըրած է:

Այս տարի Պէպէք Հայագիւղի տասնորդը Թուրք միւլթէզիմ մը կառնէ սուղ գնով կը տեսնէ, որ եթէ ըստ օրինի տասանորդ առնէ, պիտի վնասի՝ կստիպէ Հայերը, որ հնգէն մէկ տան, առարկելով, թէ առանց իրեն իմաց տալու կալերուն մէկ մասը արդէն վերցուցած են: Դեռ կալերը կսպասեն. շատ հաւանական է, որ հնգէն մէկ տան տասանորդ:

Փէօհրենցի երկու Հայ երիտասարդ իրենց հետ աղջիկ մը և հարս մը Պէպէք գիւղ կերթան. Ճամբան տապար, բրիչ, հրացանով զինեալ Սալըր գիւղացի 4-5 Թուրք դէմ ելլելով հարս ու աղջիկը առևանգել կուզեն, Հայերը կը դիմադրեն, Թուրքաց մէկը ձեռքի բրչով Հայուն գլուխը ջախջախելու համար փորձ մը ըրած ատեն, բրիչը հրացանին խորոչին կուգայ, կը պայթի և Թուրքաց մէկը կը վիրաւորվի. Թուրքերը կատղած կը բռնեն ու կը կապեն երիտասարդաց մէկը, իսկ միւսը կը փախչի: Հարս ու աղջիկը 3-4 օր կը տանեն լեռը և երկոցունց պատիւը բռնաբարելէն և կուսութիւնը պղծելէն վերջ թող կուտան: Բռնաբարեալ կիները գիւղ կը վերադառնան, մի քանի օր վերջ հարսը կը մեռնի. աղջիկը կը բողոքէ կառավարութեան, սակայն անլսելի կը մնայ ցարդ: Կալանաւոր երիտասարդը շատ մը դանակոծվելէն վերջ, կը յանձնվի կառավարութեան և ի բանտ կը դնուի:

Բնիկ եօզղատցի Ուզուն-Համբարձումի որդի Մատթէոս անուն վատ Հայ մը, օրիորդի մը հետ եօթը տարի առաջ կամուսնանայ: Այժմ եօթը տարի վերջը անարժան Մատթէոս Ալի-Րիզա անունով Եօզղատ կուգայ և վարպետութեամբ մը աղջիկը կը խլէ, կը տանի ղատիին: Թէ մայրը և թէ Հայերը կուզեն Հայ աղջիկը Թուրքին ձեռքէն առնել. կառավ. Ալի-Րիզան և աղջիկը երկու ոստիկանով Գաղատիա կը ղրկէ: Հասաւ նաև մայրը. գիշեր ցօրեկ արիւն արցունք թափելով, բողոքծ կուսակալին և իւր սրտի կտոր աղջիկը ուզեց: Սակայն տեղւոյս միւֆթին և ղատին կը պնդեն, որ աղջիկը հօր յանձնվի. մայրը կը պօռայ, կը ճչայ, թէ ինքը Հայ է և թէ իւր աղջիկը Հայ ծնած է: Աղջիկը, որ վեց տարեկան է, կուսակալին պալատն է և տակաւին իւր մօր յանձնելուն յոյս չկայ: Եթէ մայրը չյաջողի աղջիկը առնել, պիտի երթայ մինչև Պօլիս և Եւրոպական դեսպանաց ոտքը պիտի իյնայ իւր աղջիկն իրեն յանձնելու մասին:

Ագող մատենի գայմագամ Խանէֆի պէյ, որոյ չարութեանց մասին քանի քանի բողոքներ եղած էր և որ տակաւին իւր չարութիւնք կը շարունակէ, 22 Հայ կը կապէ Պէպէք գիւղէն և կը տանի փոքր Չալը-Աղըլ գիւղը հաճի Եօմէր աղայի օտան, ուր ազատելու համար 200 ոսկի կաշառք կուզէ ու կը սկսէ տանջել: 200 փարայ չունեցողը 200 ոսկի կրնա՞յ տալ: Կապեալ Հայերէն երկուքը հաստ պարաններով օտային սիւնին կը կապէ պինդ մը և պարանը այնչափ կը պրկէ, որ մէկուն աչքերը դուրս կուգայ, իսկ միւսին կողոց ոսկորները կը կոտրի և երկուքը դուրս կը ցցուի: Հրաշքը այնտեղն է, որ երկու տանջեալք ևս կապրին, և այս տանջանաց տակ բռնութեամբ „Համբարձում էֆ. Փափազեան մեզ զէնք տուաւ„ ըսել կուտան, և այս բռնի խոստովանութիւնք այժմ իբր վկայութիւն կը գործածուին:

Տ. ՄԱՏԷՆԻՑ

Անցեալ տարի ի Քէպքին-Մատէն ծանուցագիր մը փակցված էր: Կառավարութիւնը հակառակ Հայոց ջանից և պնդութեանց, որոնք գործին հեղինակը պաշտօնանկ կաղ Թուրք մալմիւդիր մը լինելը կապացուցանէին, բաւական Հայ բանտարկեց, որովհետև Գաղատիոյ նախկին կուսակալ Ապետին փաշան „նմանօրինակ դէպքերը ուրիշ ազգերու վերագրել պէտք չէ„ ըսելով, հրաման տված է: Ջոմանս 9, զոմանս 6 ամիս բանտարկե-

լէն վերջ, Գըր-Շէհրի դատարանը ցմահ բերդարգելութեան դատապարտեց՝ Ալեքսանդր Գըլըճեան, Քերովբէ և Յակոբճան Փագլայեանք, Անանիա Հաճի, Ապաճեան, Թամարզալեան և Պետրոս էֆ. անուն եօթը անձնաւորութիւնք: Դատավճիռն վաւերացոյց վերաքննիչ ատեանը առանց մանրազննին քննութեանց և իրատէով ղըրկուեցան ի Բասէն, ուր պարտաւորեալ են իրենց անմեղութեանց վրայ ողբալ ցմահ ծանր շղթայից տակ, մինչելով իրենց ընտանիքը նօթի, թշուառ և մահուան դըռանը մերձ:

Յիշեալ բանտարկելոց մին՝ Թամարզալեան, հազիւ 14 տարեկան դպրոցի աշակերտ մը, դատարանը 18 տարեկան ընդունած և ըստ այնմ պատժած է. դատապարտելոց անմեղութիւնը հրապարակով խոստովանած է գըրշէհրի դատարանին նախագահը և ըսած է. „Ես չեմ կարող զձեզ անպարտ արձակել, միայն թէ ես ձեզ ծանըր պատիժ կուտամ, որպէսզի վերաքննիչ ատեանը էվրագը ուշի ուշով քննէ և ձեր անմեղութեանց վերահասու լինելով զձեզ անպարտ թողու“. և ահա վերաքննիչ ատեանը առանց կարդալու իսկ նոցա էվրագը— „ըմիւչաւիերէյէ նէ՞ հաճէթ, էրմէնիլէր մահքեամ վէսէամ“ ըսած և գըրշէհրի դատավճիռը թաստիգ ըրած է:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԶՆԿԱՅԻՑ. Քանի մը քեղցի կուգան Երզնկա ցորեն գնելու: Քաղաքէն 4 ժամ հեռու, Մեղվցի գիւղին մօտերը քրդերը կը յարձակին վրաններ, 2-ը կը վիրաւորեն; մնացեալներուն կը թալանեն ու կը փախչին: Կողոպտեալները քաղաք կը հասնին ու ոստիկանութեանը կը դիմեն: Քանի մը փօլիս հետերնին կերթան աւազակութեան տեղը, բայց հոն ոչինչ չեն գըտնար, բացի վիրաւորներուն արիւնի հետքերը:

Կամախու Գառնի գիւղի մէջ տարիներ առաջ քիւրդի մը կալուածներ բէկ մը կը սեփականէ զօրով, քիւրդը կը հեռանայ: Մօտիկներս այդ կալուածը ծախու հանեցին. մէկ մասը առաւ Գառնի գիւղացի մը 80 ոսկով, մէկ մասն ալ Բոխորեան Վարդան վարդապետի որդիները: Այդ ատեն քիւրդը երեւան ելաւ և մարդըրկելով գնողներու քովը, իր կալուածները պահանջեց: Գառնեցին վախցաւ ու կալուածը քիւրդին թողնելով, առանց փարա մը ստանալու հեռացաւ, իսկ վարդապետի որդիքը կամեցան ընծաներով հանգստացնել բարկացած քիւրտը: Բայց անօրէն. չուզեց համաձայնիլ. գաղտնի յարձկեցաւ վանքի ջորիներու նախրի վրան: Ջորիները, ծառային և կալուածատիրոջ 14 տարեկան տղային քշեց տարաւ սարն, սպառնալով մորթել մանուկը, եթէ կալուածն իրեն չդարձնեն: Խեղճ Բոխորեանները վախէն կալուածին պաշտօնական թղթերը տուին իրեն ու կալուածէն քաշվեցան:

Արխանեան և ընկերները դեռ բանդին մէջ կը փըթին, ինչ է ըլլալու. ադոնց վիճակը, ոչ ոք գիտէ: Շաբաթը 3 անգամ քննութեան կը տանին ու կը բերեն:

ՄՇՒՑ. Ճեպրանցի Իպօ յայտնի աւազակապետը, որ միաժամանակ նա և Համիդիէ գնդի հարիւրապետ է, իր խմբով կը յարձակի Դաշտի Պաղլու հայ գիւղին վրայ և կը սպանէ Կարապետ անուն անձն ու անոր կինը: Գիւղին երիտասարդքը դէմ կ'ելլան. ահեղ կռիւ կը բացուի: Կը կռուին մինչև երեկոյան 9 ժամը. քիւրդերն սպանեալ մը թողլով՝ կը փախչին կռուէն, բայց կը յաջողին ճամբուն տանել գիւղի տաւարներէն: Երկու օրէն նորէն նոյն խումբը կը յարձկի Մեղդի, Ջիարէթ և այլ տեղերու վրայ: Հայերը կրկին կը դիմադրեն: Ընդհարումներն օր աւուր կը շատնան: Ասոնք նախերգանք էին Սասնոյ ապստամբութեան:

ԽՆՈՒՍԻՑ. Քաղքիկ գիւղէն ձերբակալեցին Մանուկ աղան, Խալիլ-Չաւուշ գիւղէն Փափխենց Վրդօ և Ղազար, երկու ազնիւ եղբարքը: Այս վերջիններուս կը մեղադրէին, որ հրացան ունին պահած, պիտի տան իրենց: Խեղճերը ճարահատեալ, երկու գոմէշ կը ծախեն՝ 2 հրացան կը գնեն և կուտան իրենց: Կառավարութիւնն այս լաւ գիտէ, բայց կրկին կը տանի Կարնոյ բանտը: Ղազար ճանապարհին խիստ կը հիւանդանայ և այժմ ալ բանդի մէջ հիւանդ կը հեծէ:

Քիւրդ Աշիրաթները յարձակեցան Խօզլու հայ գիւղացի Մարգարի տան վրայ և կողոպտեցին: Մարգարը քաջութեամբ կռվեցաւ անոնց դէմ և մեռաւ:

Ք ր դ ա ց   հ ա ր ս տ ա հ ա ր ու թ ի ւ ն ք:

Պըլկցի աշիրէթէն Մուստօ անուն աւազակապետը Շապատին գիւղէ Պլէի Սարգսի տան վրայ գիշերով 17 հոգով յարձակելով՝ տան մէջ եղած բոլոր ուտեստը ծառային շալկեցնելով, կը տանի: Յիշեալ Սարգիսը իւր բոլոր ընտանիքով միասին կը կապկապէ և այդպէս կապված կը մնան մինչև առաւօտը, մինչև դրացիները մինը կը հասկնայ: Կրկին սոյն աւազակապետը կերթայ Աղճամէլիք գիւղին մէջ Խաժոյեան Օհանի տան վրայ. հայերը կընդդիմադրեն և մեծ կռիւ կը բացւի, երկուստեք վիրաւորներ կ'իյնան, իսկ քիւրդերը սիւրմալուի հարուածով կը մեռցնեն Օհանը:

Հայերը կառավարութեան կը դիմեն. բողոքարկուք բանդը կը դրվին իրենց իրաւունքներ պաշտպանելուն համար: Քաղքիկ գիւղի վրայ դրեթէ մշտական գիշերային յարձակումներ կլնեն, ցորեն, յարդ, խոտ և այլն կը գողցուին:

Բուռնազ գիւղի վրայ Շաւէլ աղա անուն քիւրդը կը յարձակուի ահագին բազմութեամբ. խեղճ գիւղացիներ կը ստիպվին գիւղէն դուրս փախչիլ և քիւրդեր անարգել կերպով ամեն տուն կը մտնին և ամեն ինչ կը կողոպտեն կը տանին:

ՊՕԼԻՍ. Բերայի Սանկ-Աղաջի դիմաց բաղնիքի մօտի կաթոլիկ Գասպար սրճարանապետի մատնութեամբ 25-30 հոգի քղեցի անմեղ խոհարարներ բանտարկվեցան անցեալ ամիս: Այս օրերս բանտարկեալներէն ոմանք ազատեցան, իսկ 15 հոգու չափ տակաւին կը մնան բանտարկված: Մատնիչ Գասպարն ասոնց մատնած է իբր յեղափոխականներու, որոնք ունին իրենց ընկերութիւնը: Թէև կատարված խուզարկութիւնն ու հարցաքննութիւններն ասոնց կատարեալ անմեղութիւնն ապացուցին, բայց 15 հոգի երկու ամսաչափ տակաւին կը

տառապին բանտի մէջ։ Միւսները 55 ոսկիի չափ կաշառք տալով՝ ազատվեցան, բայց որովհետև ասոնք չը կրցին ուզած կաշառքը տալ, ուստի կը մնան բանտը։

Անցեալները բանտարկվեցաւ նախկին ուսուցիչ Սըմբատ Դաւթեանը։ Այս անձը երկու ամիս առաջ անգամ մ'ալ բանտարկվեցաւ և շաբաթէ մը ազատվեցաւ։ Ասոր քով խուզարկութեան ժամանակ գրած թուղթերու մէջ գտնվել է Թիֆլիս հրատարակվող „Մուրճ" ամսագրի ընկալագիր մը, „Մուրճ" բառը թարգմանված է „թոխմախ," որ հիմնված է Թուրքիայի գլուխը ջախջախելու համար։ Այս սխալ թարգմանութեան համար խեղճ մարդը նորէն բանտարկվեցաւ և 15 օր է բանտն է։

Այս օրերս հոս բանտարկվեցան 15 հոգի թոկատցիներ ևս։

ԱՑՆԹԱՊ. Կառավարութիւնը հոս բազմաթիւ խուզարկութիւններ կատարեց և բաւականին մարդիկ բանտարկեց. բանտարկեալներու մէջ են և Այնթապի բողքական կօլէժի երեք պրոֆէսօրները։ Պրոֆէսօրներու հեռագրի վրայ Պօլսի ամերիկական հիւպատոսը այս օրերս հոս ժամանեց։

ԱՂԻՔՍԱՆԴՐԻԱ. Հոս կը գտնվին Ամերիկայէն վերադարձող 35 հոգի թիւրքահպատակ հայեր, որոց կարգելվի իրենց հայրենիք վերադառնալ։ Ամեն դիմում հոս տեղի թուրքական հիւպատոսին վաւերացնել իւրեանց անցագրերը և թոյլ տալ վերադառնալ հայրենիք՝ անօգուտ անցաւ։ Անօգուտ անցաւ այդ մասին և ամերիկական դեսպանի միջնորդութիւնը։ Ամերիկական դեսպանը խորհուրդ կու տայ վերադառնալ Ամերիկա, որովհետև թուրք կառավարութիւնը Ամերիկայէն վերադարձողներու մուտքը իրենց հայրենիք՝ թուրքիա արգելած է։

ՍԱՄՍՈՆ. Սիվազէն, Թոգատէն, Ամասիաէն և ուրիշ տեղերէ հոս եկած են բազմաթիւ հայեր անցագրերով և կուզեն մեկնիլ Պօլիս, բայց տեղական կառավարութիւնը թոյլ չի տար շոգենաւ նստել։ Այսպիսի ճամբորդներ կը սպասեն և Տրապիզոն և Կերասուն։ Այս խեղճերը հեռագրեցին այդ մասին Մօպէլին, պատրիարքարանին և իրեց ազգականներուն, բայց տակաւին ոչ մի պատասխան չառին։ Ասոնց թիւը հոս, Կերաչսուն և Տրապիզոն 400-է աւելի է. վիզերնին ծուռ ամեն օր Պօլսէն լուրի կը սպասեն։ Ասոնցմէ շատերը ամենախեղճ վիճակի մէջ են և ստիպված են մուրալու։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
ՄԵՐ ՀՐՈՍԱԿԱՑԻՆ ԽՄԲԻ
ԿՈՒԻԼ

Մայր-Հայաստանում արիւն է հոսում.....

Հայը դարերի ընթացքում նեղելով, հարստահարելով, արիւնաքամ լինելով տաճիկ բռնակալ բէժիմի տակ, դարերի ընթացքում կրելով նրա ստրկական ամօթալի չղթաները, վերջապէս այսօր նրա համբերութիւնը հատած՝ գլուխ է բարձրացրել. կարծես միայն այժմ զգալով իր դրութեան անտանելիութիւնը, հայ ժողովուրդը ցնցելով, ստրկական անարգ լուծը թօթափելու ճիգեր է անում....

Վերջին ժամանակներս, Տաճկա-Հայաստանի այս եւ այն կողմերում կառավարութեան զափթիաների, զինուորների եւ «Համիդիէ» կոչված կաղմակերպված աւազակ քրդերի հետ ընդհարուող, նրանց հետ հերոսաբար կռուող, զոհ տուող եւ զոհ առնող խմբերը, հայ ժողովրդային բողոքի արտայայտութիւն հայդուկային խմբերն են, որոնք այնքան չփոթել, չանթահար են արել գլուխը կորցրած բաղդախնդիր կառավարութեան։ Ահա հայդուկային մեր խմբերից մէկի ընդհարման նկարագրութիւնը։

Երրորդ օրն էր ինչ որ մենք որոշ առաքելութեամբ ճանապարհ էինք ընկել Վասպուրական։ Հայրենիքի բարձրադագաթ ձիւնապատ լեռները, ահագին ձորն ու սարաւանդները կտրելով, վերջապէս ուզում էինք մի քիչ հանգիստ առնել, մեր սպառած ոյժերը կազդուրել։ Հակառակ մեր, մինչեւ այդ ժամանակ ընդունած սովորութեան, այդ օրը մենք կացարան ընտրեցինք ո՛չ թէ բարձր լեռը, անմատչելի գագաթները, այլ մի սարսափելի փոս՝ նեղ ձորի մէջ, հաւատալով, որ մարդկային բնակութիւնից հեռու լինելով՝ ապահով ենք։

Մի կողմից երեք օրւայ ոտքով եւ բեռնաւորված տաժանելի ճանապարհորդութիւնը, միւս կողմից անողոք ցուրտը եւ ձիւնը մեզ հանգիստ չէին տալիս։ Հայդուկը իր գործունէութեան ամբողջ ընթացքում ոչ մի բոպէ հանգիստ առնել չէ կարող. բոլոր պայմանները հայդուկի հանգստութեան սննպաստ են։ Մինչեւ անգամ հայ գիւղացին իր դռները փակում է նրա առաջ, թէեւ բացառութիւններ պակաս չեն։ Հայ գիւղացուն մի այդպիսի ակամայ դրութեան մէջ դրել է տաճիկ բռնակալութեան վերջին աստիճանի անարդար վարմունքը։ Բաւական է, որ գիւղիցը մէկը այս կամ այն բանով նպաստեց հայդուկին, դրա համար դուժում է եւ այն էլ ամենախիստ կերպով ամբողջ գիւղը.....

Չնայելով բոլոր աննպաստ պայմաններին հայ հայդուկի շրթներից երբէ՛ք, ոչ մի դէպքում տրտունջի կամ դժգոհութեան նշոյլ անգամ չէ արտայայտում։ Հայդուկին այդ կոչման մէջ մղողը եղել է ժողովրդային կռւի մէջ, հայ ժողովրդի անկախութեան վեհ գաղափարը.... եւ այդ գաղափարի համար նա պատրաստ է անտրտունջ կրելու շատ անգամ մարդկային ոյժերից վեր զրկանքներ, բարոյական, ֆիզիքական տանջանքներ.....

Մեր ընկերներից մէկը հսկում էր ձորի բարձրադիր բլուրներից մէկի վրայ, իսկ մնացածներս այս ու այն փոսի մէջ ձիւնը մի կողմը տալով եւ չոր հող քանդելով՝ տեղ էինք պատրաստում գոնէ մի քանի ժամ հանգստանալու։

Հազիւ 3 թէ 4 ժամ հանգստացել էինք, երբ մեր հսկող ընկերը նշան արեց, որ տաճիկ ձիաւոր զափթիա է տեսել։ Մի ակնթարթում մենք ոտքի վրայ էինք եւ որովհետեւ մեր դիրքը դիմադրելու ոչ մի յարմարութիւն չունէր, ուստի առաջին պայմանը լաւ դիրք ձեռք բերելն էր։ Խմբովին դիմեցինք մենք դէպի կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող բաւական յարմար լեռը։ Դեռ ձորից չէինք դուրս եկել, երբ մեր հանդէպ դուրս եկաւ տաճիկ ձիաւոր զափթիան, իսկ մեր յետեւից մի խումբ ձիաւոր դարձեալ զափթիաներ։

Մեր առաջ ընկած ընկերներից մէկը հրացանը ուսից վեր բերելը եւ զափթիայի վրայ արձակելը մէկ եղաւ։ Նախ քան հրացանի արձակելիլը, զափթիան մեզ տեսնելով բաւական սարսափած կերպով հրամայում էր ձորից չդուրս գալ եւ անձնատուր լինել, բայց երբ հրացանը արձակուեց, զափթիայի համար միանգամայն անակնկալ կերպով, այն ժամանակ նա իր ձիու գլուխը շրջեց եւ փախաւ։

Սկսուեցաւ կատաղի հրացանարձակութիւնը երկու կողմից եւս. մենք միանգամայն երկու գործ ունէինք կատարելու. եւ թշնամուն չփոթեցնել, եւ չտալով ապահով դիրք բռնել։ Մեր ընկերներից մի քանիսը կանգնում էին հրացան

արձակում, միջոց տալով միւսներին բաւական տեղ առաջ վազել, իսկ երբ միւսներն էին կանգնում հրացան արձակում, յետ մնացածներն էին առաջ խաղում։ Դժբախտութիւնը նրանումն էր, որ մեր դիրքը փոս էր, իսկ մեր հակառակորդինը բարձր. մենք հոգնած, ջարդուած, ուժասպառ էինք, նրանք ձիով, որ աւելի յարմարութիւն ունէին շուտով ամենաբարձր եւ ապահով դիրքը գրաւելու։

Տաճիկ թուլամորթ եւ վախկոտ զաւթիաները այնքան յիմարացան, այնքան շփոթւեցան, որ ամենաապահով բարձր դիրքը մոռացան բռնելու, որին եւ դիմեցինք մենք։ Դա մի 2-3 հազար ոտնաչափ բարձրութիւն ունեցող լեռ էր, որ շրջապատուած էր բաւական հեռու տարածութեան վերայ աւելի ամեհի լեռներով։ Մեզ շրջապատող թշնամու խումբը պատռելով, մենք դիմեցինք այդ լեռը, որին հասնելու համար հարկաւոր էր մի բաւական խոր ձորի միջով անցնել։ Մեր ամենավտանգաւոր րոպէն այդ էր. զաւթիաները իրանց բարձր դիրքից մեզ ձորի մէջ գնդակահարում էին. գնդակները վզզալով ընկնում էին մեր առջեւը, յետեւը, ընդամենը երկու կամ երեք քայլ հեռաւորութեամբ. սակայն մենք միջոց չունէինք գնդակների վտանգաւոր լինելու վրայ մտածել. որպէս մարմնացած արագութիւն, մենք առանց կանգ առնելու, բոլոր կարողութեամբ վազում էինք դէպի փրկարար դիրքը։ Ահա մեր ընկերներից մի քանիսը հասել էին դիրքին. նրանք թշնամուն զբաղեցնում են երենց գնդակներով. իւրաքանչիւրիս սրտում ծագում է նոր յոյսեր։ Եթէ մինչեւ դիրքը անվտանգ անցնենք, մտածում ենք իւրաքանչիւրս, այն ժամանակ հեշտ կը լինի թշնամուն ցոյց տալ մեր գնդակների անշեղութիւնը։ Ահա եւ մենք հասանք ցանկալի դիրքին։ Տղե՛րք, կամ պատուաւոր անկում, կամ զինադրութիւն մինչեւ յետին շունչ, — ձայն են տալիս մեր ընկերներից մի քանիսը։ Սկսւում է հայ յեղափոխականին կռւի րոպէներում խրախուսող երգը... Ու կռւում ենք եւ երգում.... „Ամենայն տեղ մահը մի է", քաւում է խմբի միջից.... Սակայն գնդակները անընդհատ տեղում են կարկտի նման մեր չորս կողմը։ Մեր դիրքը շրջապատել են երեք կողմից։ Բաւական չեն ձիաւոր զաւթիաները, ահա գալիս են շրջապատող քրդաբնակ գիւղերի ձիաւորուած քրդերը, որոնք հարայ-հրոց բարձրացնելով սպառնում են մեզ բոլորից կոտորել։

Դիրքը բռնելուց անմիջապէս յետոյ, մենք հաւաքւեցանք միմեանց մօտ, որպէս զի երեք մասի բաժանւենք թշնամու երեք ճակատներին դիմադրելու համար։ Ահա այդ ժամանակ մի սարսուռ անցաւ մեր մարմնով, երբ մեր ընկերներից մէկը մօտենալով մեզ ցոյց տւեց մի հրացան աւելացնելով՝ որ մեր ընկած ընկերի հրացանն է, որ ընկնելուց յետոյ վերցրի։ Մի վայրկեան մեզ տխրեցրեց այդ անսպասելի գոյժը, բայց յետոյ կարծես թէ դա աւելի վառեց, աւելի բորբոքեց մեր մէջ մինչեւ յետին շունչ կռւելու եւ ընկած ընկերին վրէժը արիւնով առնելու ցանկութիւնը....

«Տղե՛րք, Սահակը ընկած է, բայց մեռած չունի. վրէժ, արիւն, կրակ թշնամու վրայ», ձայն տւեց ընկերներից մէկը եւ սրան հետեւեց միահամուռ աղաղակը — կեցցէ՛ վրէժ, կեցցէ՛ յեղափոխութիւն....

Մեր տղերքը նոր շունչ, նոր հոգի առած, աւելի ոգեւորուած արձակեցին իրանց հրացանները... Այդ ժամանակ, արեւելեան դիրքում լսելի եղաւ մի ուրախալի բացականչութիւն, — „Սա թող լինի Սահակի փոխարէն": Բոլորս աչքներս ուղղեցինք այն կողմը, որտեղ տաճիկ զաւթիան գնդակահար եղած հայդուկի գնդակից, թաւալուած էր գետին։ „Սա էլ թո՛ղ լինի Սուլթան Համիդին ղուրբան", գոռացին հարաւային մասում դիրք բռնած մեր ընկերները, նկատելով մէկին եւս գետին գլորւելիս....

Կռիւը տեւեց ամբողջ չորս ժամ անընդհատ. մենք ընդամենը 7 հրացանաւորներ էինք. կռւում էինք աւելի քան 50 տաճիկ եւ քիւրդ հրացանաւորների հետ։

Վրայ հասաւ գիշերը. մենք պէտք է թողնէինք մեր դիրքը, որտեղ երկար մնալը մեզ ձեռնտու չէր, պաշարնիս սպառելու մօտ լինելու պատճառով։ Երկինքը թէեւ ամպամած էր, բայց լուսինը իր կախարդական լոյսը տարածում էր հեռու.... Լուսինը, տիեզերքի այդ սիրելին, այսօր մեզ պէտք չէր.... Մենք, խաւարի դէմ մարմնչելով, այսօր խաւար էինք խնդրում. եւ կարծես թէ բնութիւնն էլ զգալով մեր խնդրի անհրաժեշտութիւնը, մի թուխպ ամպ ուղարկեց առ ժամանակ սքողելու լուսնի փայլն, որով եւ մեզ միջոց տուեցաւ լուռ ու մունջ մեր դիրքից ցած իջնելու եւ մեր ճանապարհը շարունակելու....

Մենք կորցրինք մեր սիրելի ընկերներից մէկին, բայց նրա փոխարէն մենք երկու զաւթիա եւ մէկ ձի գլորեցինք գետին.... իսկ թէ էլի ընկնողներ եւ վիրաւորներ կան թշնամուց, մենք չկարողացանք տեսնել եւ իմանալ։

Այս համարում մենք չկարողացանք զետեղել Եւրոպայում կատարւող ցոյցերի, միտինգների եւ դիպլօմատիքական յարաբերութիւնների մասին հայերի վերաբերմամբ յօդւածը, բայց մենք պարտք եւ անհրաժեշտ ենք համարում հենց այս համարում ասել՝ եւրոպական այդ շարժումը մեզ ոչ պէտք է մեծ ոգեւորութիւն պատճառի եւ ոչ էլ մեծ յոյս. ինչպէս մարդկութեան պատմութիւնը, այնպէս էլ դարերի փորձերը ապացուցել, հաստատել են, որ երբէք, ոչ մի ժողովուրդ չէ ազատւել բռնակալի լծից դիպլօմատների միջնորդութեամբ եւ ոչ էլ «մարդասէրների» պլատօնական համակրութեամբ, այլ իր սեփական ոյժով, արիւնով, յեղափոխութիւնով. ուրեմն մենք մեր յոյսը պիտի դնենք մեզ վրայ եւ մի րոպէ չգրաւելով արտաքին ցոյցերով, շարունակենք մեր սկսածը — յեղափոխական գործը։ Հազար անգամ ասած, կրկնածը, այս դէպքի առթիվ դարձեալ կը կրկնենք — ազատութեան միակ միջոցը յեղափոխութիւնն է, որին եւ դիմում ենք. ազատութիւնը չէ տրւում, այլ արիւնով է ձեռք բերւում։

Լոյս տեսաւ „Կուկունեանի խմբի արշաւանքը" աքսորեալների պատկերով. խմբից պակսում են չորս հոգու պատկերը՝ ժամանակին հասած չլինելու պատճառով. Այժմ մենք կը հրատարակենք Արաբոյի, Վարդանի, Համիլի, Յունոյի և միւսների պատկերների հետ։

Նուիրատւութիւնների ցուցակ.—

Վիշապ ք.-ի Կեդրոնական սնտուկի մէջ առացւեց՝ Ռումբ խմբէն 487 դահեկան 20 փարա. Թորգոմեան խմբ. 246 դահ. Ցոլնա խմբ. 400 դահ. Կամաւորներու խմբ. 711դահ. 20 փր. Տր. կօմիտէն 100 օսմ. ոսկի. Ամերիկայի Լաւրէնս-Մաս ք.-ից Մ. Տ. Ման.-ից 2 դօլ. Լօվէլ-Մաս ք.-ից Ց. Սէֆ.-ից 1 դօլ. Պրովիդ.-մաս ք.-ից Գ. Եազ.-ից 2 դօլ. Դաշտավայրից տ. Գայանէ Վ. 3 ր. տ. Նատալիա Ց. 3 ր. Մաթար. 15 ր. Բգ. 50ր. Ալէքս. 10ր. Բգ. 30ր. Րղ. քաղ. Հայկ.10ր. Կմ. քաղ. Արմենակ. 15ր. Եկատ. 10ր. Զաք. 28ր։ Կոզաթա. 15ր. Կայծիկ. 89ր. Բժ. 25ր. Դերբ. 50ր. Օրդ. ք.-ի Ն. Մ. քհ. 10ր. Ա. բիւրցում Փարհադի միջոցով՝ Ցղ. 23ր. Եր. մի խմբ. երիտաս. 30ր.

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թըղթակցութեան և նուիրատւութեան համար դիմել.

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան.